Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի ծախսային մասի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի գործունեության ընթացքում առաջացած խնդիրների լուծմամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Հաշվի առնելով, որ տարեկան միջոցառումների ցանկում ներառված չէ ապրիլի 7-ի կանանց և մայրության տոնին նվիրված միջոցառում, սակայն անհրաժեշտություն է առաջացել տոնի կապակցությամբ ծաղիկներ ձեռք բերել և նվիրել կանանց, ուստի անհրաժեշտ է 2024թվականի բյուջեի վարչական մասում միջոցառումների ցանկում լրացուցիչ նախատեսել 3 933,4 հազ. դրամ:

Նոր Խարբերդ բնակավայրի մարզադաշտի կանաչապատման և ոռոգման նպատակով անհրաժեշտ է 2024թվականի բյուջեի վարչական մասում նախատեսել 1 564,0 հազար դրամ

Քանի որ համայնքի այլ կոմունալ ծառայությունների համար նախատեսված ֆինանսական միջոցները չեն բավականացնի մինչև տարեվերջ, իսկ խնդիրները համայնքում բազմաթիվ են անհրաժեշտ է 2024թվականի բյուջեի վարչական մասում լրացուցիչ նախատեսել 10 000,0 հազար դրամ

2024 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերում անհրաժեշտ է ներառել հետևյալ կապիտալ ծախսերը՝

- Մասիսի համայնքապետարանի 5-րդ հարկի դահլիճի համար LED էկրանների համակարգ՝ 9 733,4 հազար դրամ:
- Մասիսի համայնքապետարանի համար երկու սառնարան՝ 142,0 հազար դրամ:
- Մասիսի համայնքապետարանի նախամուտքը թեթեև կոնստրուկցիաներով կառուցելու նախագծանախահաշվային աշխատանքների և փորձաքննության համար՝ 330,0 հազար դրամ:
- Մասիս համայնքի վարչական տարածքում կանգառների նորոգման, փոխարինման տեղադրման նախագծանախահաշվային աշխատանքների և փորձաքննության համար՝ 330,0 հազար դրամ:
- Մասիս համայնքում առկա այգիներում տեղադրելու նպատակով նստարանների ձեռք բերման համար՝ 6 600,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր	
				Ծախսեր				
1	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Վարչական սարքավորումներ	5122		9 876.0	
				Նախագծահետազոտական ծախսեր. Մասիսի համայնքապետարանի նախամուտքը թեթև կոնստրուկցիաներով կառուցելու նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		300.0	
				Փորձաքննություն	5134		30.0	
2	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-15 498.0		
				Վարչական սարքավորումներ	5122		-17 136.0	
3	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքի վարչական տարածքում կանգառների նորոգման, փոխարինման տեղադրման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		300.0	
				փորձաքննություն	5134		30.0	
4	05	1	1	**Աղբահանում.** Չնախատեսված վայրերից աղբի հեռացում	4213	10 000.0		
5	05	6	1	**Շրջակա միջավայրի պաշտպանություն.** Կանաչ տարածքների խնամում	4213	1 564.0		
6	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Վարչական սարքավորումներ /նստարաններ/	5122		6 600.0	
7	08	2	4	**Այլ մշակութային կազմակերպություններ.** Ծաղիկներ ապրիլի 7-ի կապակցությամբ	4269	3 934.0		
				Ընդամենը		***0.0***	***0.0***	

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ